

ՀՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ա. Ն. ԽՈՒՐՄԻՅԱՆ

V — VII դարերում հունարենից կատարված գիտական-փիլիսոփայական թարգմանությունների ընթացքում ձևավորվել ու զարգացել է մշակութային-թարգմանչական այն ուղղությունը, որը հայագիտության մեջ ընդունված է կոչել «հունաբան դպրոց»:

Այս ուղղությունը, ինչպես իր սահմանված թարգմանական և ինքնուրույն գիտական բաղադրականի ժառանգությամբ, այնպես էլ իր լեզվական առանձնահատկություններով զրավել է հայագիտության տարբեր բնագավառների մասնագետների ուղղորդությունը: Այդուհանդերձ, հունաբան դպրոցի վերաբերյալ բանասիրական շատ հարցեր դեռևս բավարար չափով չեն հետազոտվել, կամ իրենց սպառիչ լուծումը չեն ստացել: Մատենագրական ստույգ վկայությունների և անառակելի փաստերի բացակայության պատճառով առեղծվածային բնույթ են կրում այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ժամանակագրությունը, առաջացման նախադրյալները, տեղի, հիմնադիրների ու ներկայացուցիչների անունների ճշտումը, նրանց հետապնդած նպատակները, կատարած թարգմանություններն ու ինքնուրույն գործերը, նրանց թարգմանության կամ դրության ժամանակը, հունաբան տարբեր երկերի թարգմանչի կամ հեղինակի անձնավորությունը, բարբառային իրողությունների օգտագործումը հունաբան հայերենում և այլն:

Հունաբան դպրոցի պատմությունն ուսումնասիրողներին ամենից շատ դրադեցրել է այս դպրոցի ժամանակագրությունը. և դա պատահական չէ: Ինչպես յուրաքանչյուր գիտության, այնպես էլ հայ մշակույթի և հայոց լեզվի պատմության հիմնական նախադրյալներից մեկը հանդիսանում է ժամանակագրությունը, առանց որի գիտական պատմությունը վեր է ածվում սոսկ փաստերի արձանագրման: Այս նկատառումով հունաբան դպրոցի ժամանակագրության ճշտումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն հայոց լեզվի, այլև հայ մշակույթի պատմության համար: Սակայն այս ուղղության, մասնավորապես, առաջացման ժամանակի հարցը եղել է բանասիրության կնճռոտ պրոբլեմներից մեկը: Այդ մասին արտահայտվել են բաղաձայնի կարծիքներ, որոնք հունաբան դպրոցի սկիզբը տարուբերել են V դարի առաջին կեսից մինչև VIII դար: Այս հանգամանքը մեզ ստիպել է անդրադառնալ հունաբան դպրոցի ժամանակագրական մի քանի հարցերի և մեր ուժերի ներած չափով դրադել նրանց քննությամբ:

Հունաբան դպրոցի ժամանակագրությունը հետաքրքրել է այս ուղղության ուսումնասիրությամբ զբաղված գրեթե բոլոր բանասերներին: Սակայն մենք, հնարավորություն չունենալով այստեղ յուրաքանչյուր տեսակետի քննությամբ առանձին դրադելու, կփորձենք դրանք խմբավորել և ներկայացնել ընդհանուր

զծերով, նկատի ունենալով, որ նույնիսկ միևնույն տեսակետը պաշտպանող-ներն անգամ, հաճախ, ունեցել են տարրեր կոմպաններ:

1. Անցյալի բանասերները, հատկապես Մխիթարյանները, մատենագրական ավանդական տեղեկությունների և լեզվական իրենց մանրախույզ դիտողությունների հիման վրա՝ հունարան դպրոցի հիմնադիրներ են համարել կրտսեր թարգմանիչներին, իսկ նրանց դրական-թարգմանչական գործունեության սկիզբը՝ V դարի կեսերը¹: Հետևաբար, այս բանասերների կարծիքով, հունարան հայերենի կազմավորումն սկսվել է 460-ական թթ. իսկ նույն դարի վերջին այն տիրապետող երևույթ է դարձել: Այս տեսակետը պաշտպանել են Մ. Ավգերյանը, Հ. Գաթրոնյանը, Ս. Գարաշաշյանը, Ա. Այտրնյանը, Գ. Զարբանալյանը, Թ. Խոնյանը, Ա. Սուքրյանը, Նորայր Բյուզանդացին, Գ. Գալիմբյարյանը և ուրիշներ: Հետագայում, նոր հետազոտությունների հիման վրա նույն տեսակետը պաշտպանել են Դ. Տեր-Սկրտչյանը, Կ. Տեր-Մկրտչյանը, Ստ. Մախասյանը, Մ. Աբեղյանը, Ա. Աղամյանը: Ստ. Մախասյանը հորենացուն համարելով հունարան դպրոցի գլխավոր ներկայացուցիչներից մեկը, նշում է, որ եթե 480-ական թթ. սկզբին հորենացին իր մասին գրում է՝ «այդ ծեր եմ և հիւանդոտ և անպարապ ի թարգմանութեանց», ուրեմն հունարան դպրոցի «նախնիքս վաստակները երևան կարող էին գալ և եկան V դարի 50—80-ական թվականներին»²: Մ. Աբեղյանը հենվելով Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թարգմանության Դ. Տեր-Մկրտչյանի առաջարկած թվականի վրա, նկատում է, որ եթե «Հակաճառության» թարգմանությունը վերաբերում է հունարան դպրոցի երկրորդ խմբին, և կատարված է 480—484 թթ., ապա առաջին խմբի երկերի թարգմանությունները պետք է կատարված լինեն «ոչ թե VI դարում կամ V դարի վերջերին, այլ 480—484 թվականներից մոտ 2—3 տասնամյակ առաջ: Հետևաբար, հունարան դպրոցի սկիզբը ընկնում է V դարի երրորդ քառորդին՝ 450—475 թվականներին»³:

Այս տեսակետն անցյալում թեև խիստ քննադատության է ենթարկվել, որովհետև նրա հիմքը հանդիսացող մատենագրական ավանդական տեղեկությունները համարվել են անվավեր, սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նրանք հեռու չեն իրականությունից:

2. Որոշ բանասերներ ավելի առաջ գնալով, ենթադրում են, որ հունարան հայերենի կազմավորումը պետք է սկսված լինի V դարի կեսից էլ առաջ, դասական հայերենին զուգահեռ: Այս տեսակետի հիմքում նույնպես ընկած են լեզվական-համեմատական դիտողություններն ու մատենագրական տեղեկությունները: Անցյալում այս տեսակետը պաշտպանել են Ֆր. Կոնիքերը և Ա. Վարդանյանը: Վարդան Հացունին Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանությունը համարում է V դարի կեսից առաջ կատարված, այն ճկատառումով, որ նախ՝ այստեղ բերված են գուտ դասական շրջանի հայկական անուններ. ինչպես՝ Մանեհ, Արտակ, Բաբղեն, Կորյուն, Մաշտոց, Մանուկ-Երկրորդ՝ Ավետարանի Բաներեղես անունը փոխանակ բնագրի «Որդի որոտման» ձևի, թարգմանված է «Ձայն գոշման»։ «Ազատություն մը՝ որ հատուկ էր

¹ Դ. Զարբանալյան, Մատենադարան հայկական թարգմանության նախնաց (Դար Դ—ԺԿ), Վենետիկ, 1889, էջ 16:

² Ստ. Մախասյան, Խորենացու առեղծվածի շուրջը, Նրևան, 1940, էջ 40:

³ Մ. Աբեղյան, Հայոց Հին գրականության պատմություն, հատ. 1, Նրևան, 1941, էջ 101:

ոսկեդարյան թարգմանչաց»⁴։ Վ. Հացունին ժամանակի մասին իր տեսակետը հիմնավորում է այն պատճառաբանությամբ, որ ասորական կողմնորոշում ունեցող պահպանողական հոգևորականությունը V դարի կեսերից կատաղի պայքար էր մղում հունասեր փոքրամասնության դեմ։ հետևաբար, V դարի II կեսում հունաբանների տաղանդը ոչ միայն չէր կարող զարգանալ, այլ ամլության էր դատապարտվում արդեն։

Պրոֆ. Գ. Զահուկյանը համաձայն լինելով առաջին տեսակետին, հաստատում է, որ «հունաբան զպրոցի հիմնադիրները պիտի լինեին հունական լավ կրթություն ստացածները՝ «կրտսեր թարգմանիչները»»⁵, որովհետև V դարից հետո հայերը մասամբ ներքին քաղաքական և մշակութային փոփոխությունների, մասամբ էլ հայ եկեղեցու կողմից որդեգրած հակաքաղկեդոնականության պատճառով դադարեցին մասսայական կերպով Հունաստան զնալ ուսումնառության։ Երկրորդ՝ նա նկատում է, որ Թրակացու բերականության թարգմանությունից առաջ բերականական կայուն տերմինաբանություն չի եղել։ հետևաբար, պարզ է, որ այդ տերմիններն օգտագործողները զրեւ են նրանից հետո։ նա եզրակացնում է, որ հորենացին, որը տարբերել է թարգմանչի կերտած «տառ» և «շարագիր» կամ «նշանագիր» բառերը, «տեղյակ է եղել Թրակացու երկի թարգմանության որոշ մեկնություններին, գոցե և եղել է դրանցից մեկի հեղինակը»։ Եղիշեն իր «Արարածոց մեկնութեան» մեջ նույնպես օգտվել է Թրակացու բերականությունից։ Երրորդ՝ նա պաշտպանում է «Հակաճառության» թարգմանության ժամանակի մասին Գ. Տեր-Մկրտչյանի տեսակետը՝ 480—484 թթ.։ Մակայն պրոֆ. Զահուկյանը հավանական է գտնում նաև, որ կրտսեր թարգմանիչներն իրենց թարգմանչական գործունեությունն սկսած լինեն V դարի կեսից առաջ, նկատի ունենալով Մովսեսի և Դավթի կենսագրությունից որոշ փաստեր։ ինչպես՝ նրանց կանչվելը Թեոդոս կայսեր (408—450 թ.) մոտ. 451 թ. Քաղկեդոնի ժողովի դեմ նրանց ելույթ ունենալը, Դյուտ կաթողիկոսի (461—476) խնդրանքով զրված և մեզ հասած Դավթի մի պրությունը, Դավթի մասին հորենացու տված կենսագրական տեղեկությունների համընկնելը այլ աղբյուրների տվյալների հետ և այլն։ Դ. Թրակացու բերականության թարգմանությունը վերապրելով Դավթին, պրոֆ. Գ. Զահուկյանը ենթադրում է, որ «Դավթն ունեցել է թարգմանչական գործունեության երկու շրջան, և անհնար չէ, որ այն թարգմանած լինի իր գործունեության առաջին շրջանում, հավանաբար V դարի երկրորդ քառորդում»⁶։

3. Բանասերների երրորդ խումբը գտնում է, որ հունաբան զպրոցը սկսվել է V դարի վերջերից կամ VI դարի սկզբներին։ Այս տեսակետի զիսավոր ներկայացուցիչն է Հ. Մանանդյանը, որի մասին կխոսենք առանձին։ Հ. Մանանդյանից անկախ այս կարծիքին են նաև Ա. Մեյեն ու Հ. Աճառյանը։ Հ. Աճառյանը թեև 461 թ. մինչև VI դարի լեզուն համարում է հետմեսրոպյան հայերեն ու այն կապում գերազանցապես «երկրորդ թարգմանիչների» գործունեության հետ, նույնիսկ, հորենացու լեզուն համարում հունաբան, այնուամենայնիվ այս զպրոցի առաջացումը դնում է VI դարի սկզբին։ Հետագայում Հ. Մանանդյան-

4 Վ. Հացունի. Դաստիարակությունը հին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 111—112։

5 Գ. Զահուկյան. Բերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Սրեան, 1954, էջ 51։

6 Նույն տեղում, էջ 52։

7 Նույն տեղում, էջ 53։

նի տեսակետը լայն ընդունելություն է գտել և արտահայտվել սովետահայ մի շարք լեզվաբանների ու բանասերների աշխատություններում:

4. Եղել են նաև բանասերներ, որոնք հունարան դպրոցի առաջացումը տարել են VI դարի վերջը, VII, նույնիսկ VIII դար: Ն. Ադոնցը, որը խորապես ուսումնասիրել է հունարան դպրոցի վերաբերյալ բանասիրական այլ հարցեր, շատ անորոշ կարծիք է հայտնում նրա առաջացման ժամանակի մասին: Անվատահելի համարելով մատենագրական տեղեկությունները, նա հունարան դպրոցի առաջին 3 մեկնիչների՝ Դավթի, Մովսեսի և Անանունի ժամանակը որոշում է հիմնվելով Ստեփանոս Մյունեցու ժամանակի վրա և ենթադրում, որ հունարան քերականները պետք է ապրած լինեն VII դարում: Ըստ որում, Ն. Ադոնցը հայ գերականական և փոխոգայտական մտքի սկզբնավորման ու զարգացման ժամանակաշրջանը համարում է VII դարը, էապելով այն բյուզանդական քերականական մտքի ծաղկման ու սովորական շրջանի հետ:

5. Հովսեփյանը, նույնպես անվավեր ավանդություն համարելով կրտսեր թարգմանիչների մասին մատենագրական տեղեկությունները, «Պիտոյից դիրքը», որը հավանաբար հունարան դպրոցի առաջին թարգմանություններից մեկն է, թարգմանված է համարում VII դարի II կեսին, VIII դարի սկզբին:

Իսկ Ն. Ակինյանը գրում է. «Եղիշե և Մովսես հորենացի, որոնք ըստ ավանդության V դարու II կեսին կվերաբերեն, կթուլացնեն գրիչը արտահայտվելու ազատ: Այսօր բարեբախտաբար բարձրված են հրապարակեն այս խափանարար խոչընդոտները. Եղիշե յուր պատշաճավոր տեղն ունի Զ գարու վերջին և Մովսես հորենացին Թ գարու առաջին քառորդին»¹⁰: Ուստի Ն. Ակինյանը համարձակ կերպով եզրակացնում է. «կարող ենք այժմ (հունարան դպրոցի) իսկական ժամանակը ամփոփել 572—603 երեսնամյա ժամանակամիջոցի մեջ»¹¹, համոզված լինելով, որ պարսիկների դեմ 572 թ. հայերի ապստամբությունն է շարժառիթ հանդիսացել հունարան դպրոցի առաջացման: Այժմ քանի որ հիմնավոր կերպով ապացուցված է հորենացու և Եղիշեի V դարի հեղինակներ լինելը, Ն. Ակինյանի տեսությունն ուղղվում է իր դեմ, որովհետև, հենց իր վկայությամբ, այս մատենագիրների հունարանության մեջ մարզված լինելը կասկած չի հարուցում:

Համառոտակի սրանք են հունարան դպրոցի առաջացման ժամանակի մասին բանասիրության մեջ արտահայտված կարծիքները:

Նկատի ունենալով, որ հունարան դպրոցի բանասիրական հարցերի ուսումնասիրությամբ, այդ թվում և նրա ժամանակագրության ճշտմամբ, առավել հանգամանորեն զբաղվել է Խկադ. Հ. Մանանդյանը, անհրաժեշտ ենք համարում ավելի մանրամասնորեն կանգ առնել նրա տեսակետի վրա:

Հ. Մանանդյանը կատարել է լեզվական մանրագնին համեմատություններ այս դպրոցի առանձին թարգմանությունների ու նրանց բնադրերի և տարրերի երկերի բառապաշարի ու քերականական առանձնահատկությունների միջև: Բացահայտել է նաև տարրերի երկերի մեջ հանդիպող համեմատական հատվածների

¹⁰ 86-11. Адонц, Дионасий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ СХСIII.

¹¹ Գ. Հովսեփյան, Դավթի շարացին և Պիտոյից դիրքը, «Արարատ», 1908, էջ 213:

¹² Ն. Ակինյան, Բանական հայերենը և Վիեննական Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 86:

¹³ Նույն տեղում:

թարգմանությունների կապն ու առնչությունը Այդ ուսումնասիրությունների հիման վրա նա հանգել է այն եզրակացության, որ «Հունարան զպրոցի իմաստասիրական, ճարտասանական ու քերականական երկերը բաժանվում են... երեք տարբեր խմբերի, որոնք զանազան ժամանակաշրջանների աշխատություններ են և ծագել են հաջորդաբար, մոտ երկու հարյուր տարվա ընթացքում, սկսած վեցերորդ դարի սկիզբներից կամ հինգերորդ դարի վերջերից, ուրեմն, զխափորապես, վեցերորդ և յոթներորդ դարերում»¹²։

Ըստ լեզվական առանձնահատկությունների, Հ. Մանանդյանը հունարան զպրոցի թարգմանությունները դասդասում է երեք տարբեր խմբերում։

Առաջին խմբի թարգմանություններ նա համարել է Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ»-ը, Փիլոն Երրայեցու երկերն ու ճառերը, «Գիրք Պիտոյից»-ը, Իրենիոսի «Ցույցք առաքելական քարոզութեանն» և «Ընդդէմ հերձուածոց» երկերը։ Ն. Աղոնցից հետո Հ. Մանանդյանը ևս հաստատում է, որ նշված թարգմանությունների մեջ Դ. Թրակացու քերականությունը ժամանակով պետք է նախորդած լինի մյուսներին, որովհետև քերականական այն տերմինաբանությունը, որը նույնությամբ հասցիւյում է և՛ Փիլոնի երկերում, և՛ Պիտոյից զրբում, առաջին անգամ կազմված պիտի լինի Թրակացու քերականության թարգմանության առիթով։

Հ. Մանանդյանի կարծիքով, վերոհիշյալ թարգմանություններին հատուկ է բացառաբար այս խմբում օգտագործված մի ընդհանուր բառապաշար, որը նախ՝ չափազանց մոտեցնում է այդ երկերը իրար և խմբակից դարձնում միմյանց։ Երկրորդ զգալի կերպով տարբերում է այս խմբի երկերի լեզուն մի կողմից՝ զասական հայերենից, մյուս կողմից՝ հունարան զպրոցի հետագա թարգմանությունների լեզվից։ Այս խմբին բնորոշ լեզվական հատկանիշ է համարում նորաստեղծ նախածանցների միջոցով հունարան հատուկ բառակազմությունը, որը գտնվում է իր կազմավորման ու զարգացման առաջին շրջանում։ օրինակ՝ հունարեն *ἀνα-*, *ἐκ-* և *μετὰ-* նախդիր-նախածանցները, որոնք հետագայում թարգմանվել են հակ-, տար- և փոխ- նախածանցներով, այս խմբի թարգմանություններում զրեթե չեն հանդիպում։

Երկրորդ խմբի թարգմանություններ են ըստ Հ. Մանանդյանի՝ Տիմոթեոս Կուդի «Հակաճառութիւն»-ը, Արիստոտելի «Յաղագս մեկնութեան»-ը և «Ստորոգութիւնք»-ը, Պորփյուրի «Ներածութիւն»-ը, սխալմամբ Դավիթ Անհաղթին վերագրված՝ Յամբլիբոսի «Մեկնութիւն յաղագս մեկնութեան զրոցն Արիստոտէլի» և «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» երկերը։ Հետագայում Հ. Մանանդյանն այս խմբի թարգմանություններին խմբակից ու ժամանակակից է համարել ավելի ուշ հայտնւորւոված՝ Թեոնիսա «Յաղագս ճարտասանական կրթութեանց» և Հերմես Նոամեծի «Առ Ասկղեպիոս սահմանք» երկերի թարգմանությունները։

Այս երկերի խմբակցության համար Հ. Մանանդյանը հիմք է ընդունել հունարան բառակազմությամբ այն հազվագյուտ ու առանձնահատուկ բառապաշարը, որը գործ է ածվել զրեթե բացառաբար այս խմբի թարգմանություններում։ Օր.՝ ապուսեմ, առնշանակեմ, բացերեոցեմ, թուկութիւն, կարութիւն,

¹² Հ. Մանանդյան, Հունարան զպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 222—223։

իրականություն, իրատրեմ, հակաճառեմ, ներանձնաւոր, ներշնչական, փարաբարձեմ, փարադրեմ, փարադրություն, փարադրալն են:

Հ. Մանանդյանը նշված երկերը երկրորդ խմբի թարգմանություններ է համարել այն նկատառումով, որ դրանք մեծ չափով գտնվում են առաջին խմբի բառապաշարի ու քերականական առանձնահատկությունների ազդեցության տակ: Այստեղ օգտագործված է նաև նախորդ շրջանի քերականական ու ճարտասանական տերմինաբանությունը: Հետևաբար, նա ենթադրում է, որ վերահիշյալ երկերը պետք է թարգմանված լինեն ավելի ուշ, քան առաջին խմբի թարգմանությունները:

Սրբուհո խմբի թարգմանություններ Հ. Մանանդյանը համարել է Դավիթ. Օլիմպիոդորոսի խմբի իմաստասիրական մեկնությունները. դրանք են՝ «Սահմանը իմաստասիրության»¹³, «Վերլուծություն ներածության Պոփիլիի՝ Դսոթի փիլիսոփայի ներդիւնացւոյ», Դավթի «Առածը հինգ» և «Վասն բաժանման», «Մեկնութիւն շորեքտասան զլիսոց Արիստոտէլի ի Վերլուծականն», «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի բնծայեալ էլիասայ իմաստասիրի» և «Հատուած ինչ մեկնութեան Ստորոգութեանցն Արիստոտէլի»: Սրանց խմբակից է համարել նաև «Արիստոտէլի իմաստասիրի թուղթ առ Աղեքսանդրոս թագաւոր՝ պատմութիւն յաղագս աշխարհի», «Արիստոտէլի յաղագս առաքինութեանց առ Աղեքսանդրոս թագաւոր» և Նոննոսի մեկնությունների հայերեն թարգմանությունները, որոնք թէև հունարան հայերենով են գրված, բայց զերծ են հունարան երկերին հատուկ լեզվական ու քերականական բոլոր խրթնարանություններից: Հետագայում այս խմբի թարգմանություններ են համարվել նոր հայտնաբերված՝ Զենոնի «Յաղագս բնութեան»¹⁴ և «Ճարտասան, Յաղագս բնութեան» ու «Սահմանը փիլիսոփայական»¹⁵ ճարտասանական-փիլիսոփայական երկերի թարգմանությունները:

Այս խմբի թարգմանությունները, ըստ Հ. Մանանդյանի՝ կրել են նախորդ երկու խմբերի լեզվական առանձնահատկությունների ազդեցությունը: Այստեղ ավելի հարստացված ու ճոխացված է հունաբան բառապաշարը, իսկ լեզուն ավելի մշակված ու կաղապարված է հունարենի հետևողությամբ: Իրեն երրորդ շերտի տարբերակիչ հատկանիշ, Մանանդյանը դարձյալ բերում է բացառաբար այս խմբի թարգմանությունների մեջ օգտագործված մի մեծ բառապաշար. «ը»՝ բնաբանել, բնաբանական(ք), բնաբանություն, բաղեղերումն, տեսակարարեմ, տեսակարար, յարագրեմ, կենդանարոյս, երևակայութիւն, եզրուկացութիւն, կորնթարդ, բացազործեմ, հանրական, յարածեմ, անհատել, բնդհանրական և այլն:

Բացի լեզվական ուսումնասիրություններից, նշված երեք խմբերի մոտավոր ժամանակը որոշելու համար Հ. Մանանդյանն ունի նաև ժամանակագրա-

¹³ Այս երկի լրիվ վերնագիրն է «Դավթի եռամեծի և անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեանցն շորից Պիհոնի իմաստակի և Սահմանք և տրամատութիւնք իմաստասիրութեան», իսկ ըստ հնագույն հայ ձեռագրերի՝ «Դավթի փիլիսոփայի ներդիւնացւոյ առաջարանութիւն սահմանաց իմաստասիրութեան»:

¹⁴ Տե՛ս է. Խաչիկյան, Զենոնի «Յաղագս բնութեան» երկի հայկական թարգմանությունը, ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատուն (Մատենադարան), Գիտական նյութերի ժողովածու, X 2, Երևան, 1949, էջ 75:

¹⁵ Տե՛ս С. Аревшатян, Два древних философских фрагмента—«Ритор, о природе» и «Философские определения», «Բանբեր Մատենադարանի», № 3, Երևան, 1960, էջ 372:

կան մի կովան։ Նրա կարծիքով հունաբան զայրոցի թարգմանություններից որևէ մեկի ժամանակի ճշտումը հնարավորություն կուտ որոշելու «գեթ մոտավոր կերպով թե՛ մյուս երկերի թարգմանության ժամանակը և թե՛ հունաբան զայրոցի ծագման դարաշրջանը»¹⁶ ժամանակագրական այդպիսի կովան նա համարել է Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թարգմանության իր առաջարկած թվականը. և վերջնականապես ճշտված նկատելով այն, հիմք է ծառայեցրել վերոհիշյալ խմբերի ժամանակի որոշմանը։

Նա գտնում է, որ եթե «Հակաճառության» թարգմանությունը, որը երկրորդ խմբի դործ է, կատարվել է 552—564 թթ. ժամանակամիջոցում. ապա առաջին խմբի թարգմանությունների «ժամանակը պետք է գնել Տիմոթեոս Կուզի Հակաճառության թարգմանությունից առաջ, ուրեմն՝ ոչ ուշ քան VI դարի առաջին կեսը»¹⁷։ Ներկուրդ խմբի թարգմանությունները՝ Յամբլիքոսի խմբի երկերն ու մեկնությունները, որոնք խմբակից ու ժամանակակից են Տիմոթեոս Կուզի Հակաճառության թարգմանությանը, պետք է թարգմանված լինեն VI դարի երկրորդ կեսում, ավելի ճիշտ՝ 70-ական թվականներին¹⁸։ Իսկ երրորդ խմբի թարգմանությունները՝ «վեցերորդ դարի վերջերից ոչ առաջ և, ամենայն հավանականությամբ, մինչև յոթերորդ դարի վերջերս»¹⁹։

2. Մանանդյանի կատարած լեզվահամեմատական լուրջ և բազմակողմանի ուսումնասիրությունը, ընդհանրապես, հունաբան զայրոցի զարգացման հաջորդական բնթացքը լուսաբանելու ուղղությամբ, անշուշտ, դրական մեծ քայլ է։ Այնուամենայնիվ, նրա վերոհիշյալ խմբավորումը, թե՛ լեզվական, թե՛ ժամանակագրական տեսակետից, կրում է պայմանական բնույթ։

Ուշագրավ է, որ երեք խմբերի համար էլ 2. Մանանդյանի նկատած լեզվական բնորոշ առանձնահատկությունները, որոնք յուրաքանչյուր խմբի համար տարբերակիչ հատկանիշ են համարվում, վերաբերում են, մեծ մասամբ, բառապաշարի և տերմինաբանության ընդհանրություններին ու տարբերություններին և որոշ նախածանցների՝ (նալ-, աաւ-, փոխ-) տարբեր խմբերում գործածական կամ անգործածական լինելուն։ Նրա նշած քերականական միակ առանձնահատկությունը և և ու նախածանցների լայն կիրառությունն է առաջին խմբի թարգմանություններում, որոշ չափով՝ երկրորդ խմբի գործերում, և առհասարակ նրանց բացակայությունը՝ երրորդ խմբի թարգմանություններում։ Խոսում է նաև սեռական հոլովի և վերջավորության մասին (օր.՝ ելոյր, սեռոյր, ասացելոյր, մարդոյր, մարդոցրն, միայնոյր և այլն), որը բնորոշ է համարում միայն Պորփյուրի «Ներածության» թարգմանությանը։

Ակադ. Մ. Աբեղյանը իրավացիորեն առարկելով 2. Մանանդյանին, գրում է. «Կարելի չէ՝ առանց արտաքին ցուցմունքի, լեզվով միայն. հունաբան ոճի վրա միայն հիմնվելով, կոնկրետ հետևություններ անել. որոշել գրվածքների, ուրեմն և գրական զայրոցների ժամանակագրությունը»։ «Այսպես դատողները մոռանում են, որ ուրիշ լեզուներից թարգմանություն անողները, ինչպես և ուրիշ լեզվի ու զրականության ազդեցության շրջանում ինքնուրույն գրողներն ան-

16 2. Մանանդյան, Հունարան զայրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 95։

17 Նույն տեղում, էջ 107։

18 Նույն տեղում, էջ 142։

19 Նույն տեղում, էջ 208։

զամ, միշտ միակերպ հստակ ոճ չեն բանեցնում: ...Այսպես է և մեր օրերում, այսպես եղել է և հնումն, և V դարում»²⁰:

Հնարավոր է, որ նույն ժամանակաշրջանի մատենագիրներ տարբեր շափով տիրապետելով հունարենի և հայերենի լեզվական բաղադրյալ հնարավորություններին, թարգմանական արվեստին, կիրառած լինեն բառակազմական և քերականական տարբեր միջոցներ. կամ, ըստ թարգմանվող երկի բնույթի, կարևորության, հաճախակի կիրառության և վայելած ժողովրդականության՝ մեկը բառացի թարգմանած լինի, մյուսը՝ ավելի ազատ. կամ, ըստ ճաշակի՝ մեկը շափավոր հունարանություն կիրառած լինի, մյուսը՝ ծայրահեղ. Հնարավոր է, որ նույն թարգմանչի վրա հունարենի և հունական մշակույթի անմիջական ազդեցությունը Հունաստանում, կամ հայրենիք վերադառնալուց քիչ անց, շատ ավելի ուժեղ եղած լինի, քան հայրենիքում երկար տարիներ ապրելուց հետո: Եվ կամ, ընդհակառակը, մատենագիրն իր գրական-թարգմանչական գործունեության հետագա շրջաններում կարող է մարզված լինել հունարանության մեջ, հարստացրած լինել իր բառապաշարը, նույն բանը թարգմանած լինել տարբեր կերպ, կամ օգտագործած լինել լեզվական տարբեր առանձնահատկություններ:

Հավանական է, որ ինչպես ակադ. Հ. Աճառյանն է ենթադրում, հունարան դպրոցն իր գոյության ընթացքում ունեցած լինի զանազան դպրոցներ, որոնք օգտագործած լինեն բառակազմական և քերականական տարբեր միջոցներ: Իրրև ապացույց, ակադ. Հ. Աճառյանը հիշում է այն հանգամանքը, որ հունարեն նույն նախածանցը թարգմանվել է մերթ այսպես, մերթ այնպես. օր.՝ հուն.

շաղ- նախդիր-նախածանցը հունարան հեղինակները թարգմանել են բաղ-, շաղ-, շար-, փաղ-, յար-. ջա-ն՝ տար-, տրամ-. թաթա-ն՝ յար-, տար-. յոթ-ն՝ ստոլ- և ենր-. ջաթ-ն՝ հալ- և դեր-. 'աթ-ն՝ առ- և բաց — Նմանապես, հայերեն միևնույն նախածանցն արտահայտում է հունարեն երկու տարբեր նախդիր-նախածանցներ. օրինակ՝ յար-ը համապատասխանում է հունարեն թաթա- և յոթ-, տար-ը՝ թաթա- և ջա- նախդիր-նախածանցներին²¹:

Հնարավոր է նաև, որ շատ բառեր կամ տերմիններ թարգմանչին ծանոթ եղած լինեն, բայց տվյալ երկի թարգմանության ընթացքում նա առիթ ունեցած չլինի դրանք օգտագործելու: Եվ կամ, թարգմանչի՝ հունարան բառակազմությանը որոշ բառերի ծանոթ չլինելը դեռևս չի նշանակում կամ չի կարող ապացույց ծառայել այն բանի, որ այդ բառերը նրա ժամանակ ուրիշների կողմից չեն կիրառվել: Մանավանդ, որ հունարան դպրոցի բոլոր թարգմանությունները չեն, որ հասել են մեզ. հնտեաբար հնարավորություն չունենք այս դպրոցի ամբողջ ժառանգության մասին խոսելու: Եղածների մեջ էլ կան թարգմանություններ, որոնք ամբողջական չեն, իսկ որոշ թարգմանություններից միայն հատվածներ են պահպանվել: Հետևաբար, Հ. Մանանդյանի՝ հունարան թարգմանությունների լամբավորման և յուրաքանչյուր լամբի մոտավոր ժամանակի որոշման համար բառապաշարի ու մի քանի նախածանցների կիրառությունը կամ բացակայությունը հիմք ընդունելը այնքան էլ վստահելի միջոց չի կարող ծառայել: Լեզվի և ոճի համեմատական ուսումնասիրությունն անպայման

²⁰ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 1, Երևան, 1944, էջ 97—98:

²¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 156—157:

կարևոր և կողմնորոշող նշանակություն կարող է ունենալ հունաբան դպրոցի երկերի խմբավորման համար այն դեպքում, երբ լեզվական փաստը կապված է ժամանակագրական որևէ վկայության հետ, կամ արտահայտում է բառի, ասույթի այնպիսի շուրահատուկ կազմություն, որը բնորոշ է այս կամ այն հեղինակին և հանդիպում է նրա ինքնուրույն երկերում, և կամ՝ երբ նկատելի է թարգմանությունների և ինքնուրույն երկերի մեջ համանման հատվածների ու տեղի այնպիսի բացահայտ ընդհանրություն, որը ոչ մի կասկածի տեղ չի թողնում:

Առավել վիճելի է Հ. Մանանդյանի ժամանակագրական կոմանր. որովհետև Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թարգմանության ժամանակի մասին առայժմ բանասիրության մեջ դոյություն չունի միասնական կարծիք: Այս հրկր, թեև միակն է հունաբան թարգմանություններից, որի մեջ հիշատակված անձնավորությունների ու նրանց հետ կապված պատմական անցքերի ժամանակագրությունը հնարավորություն է ընձևում պարզելու թարգմանության մոտավոր ժամանակը, սակայն, այդ մասին թարգմանության մեջ պահպանված տարրեր վկայությունները բանասիրության մեջ առաջացրել են բազմաթիվ վեճեր և լուրջ տարակարծություններ:

Այսպես, «Հակաճառության» հրատարակիչները՝ Կ. Տեր-Մկրտչյան և Ե. Տեր-Մինասյան, հենվելով Փոտ պատրիարքի Հայոց Զաքարիա կաթողիկոսին գրած Թղթի վկայության վրա, թարգմանությունը կոտարված են համարում ներսես Բ Աշտարակեցու օրով, նրա հրավիրած Դվինի երկրորդ ժողովի առթիվով, շուրջ 552—556 թթ.:

Գ. Տեր-Մկրտչյանը, պարզելով նույն թարգմանության մեջ հիշված Դիոսկորոսի մահվան թվականը, տոմարական հաստատ հաշիվների համաձայն գտնում է, որ Թովթ Ե, սեպտ. Բ, Հոռի Զ զուգավորությունը կարող է հանդիպել միայն 480—484 թվականին: Հետևաբար թարգմանության ճշտագույն սահմանները որոշում է 480 թ. փետր. 29-ից 484 թ. փետր. 28-ի թառամյակը:

Ն. Ակիսյանը գտնելով հանդերձ Գ. Տեր-Մկրտչյանի սուր նկատողությունը, այնուամենայնիվ, հենվելով «Յաղագս հայկական իրաք» (De rebus Armeniae) գրության մեջ Անանուն հեղինակի վկայության վրա, որն աղբյուր է ծառայել նաև Փոտին, թարգմանության ժամկետակը համարում է 548—557-ը, հետադադում՝ 601—603 թթ.²²:

Գ. Տեր-Մկրտչյանը երկրորդ անգամ անդրադառնալով այս հարցին, ավելի հիմնավոր կերպով հաստատում է իր եզրակացությունը, իսկ Անանունի տեղեկությունների մասին գրում է. «Անանունի ցուցումները թեև ուշադրության արժանի, բայց իմ կարծիքով անդոր են բուն Տիմոթեոսի թարգմանության մեջ պահված թվականի դեմ, եթե այս վերջինում սխալ կամ թյուրիմացություն չկա»²³: Գ. Տեր-Մկրտչյանը պարզում է նաև, որ «Գիրք թղթոց»-ում պահված

22 Գ. Տեր-Մկրտչյան, Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» հայ թարգմանության ժամանակը և ս. գրքի երրորդ կամ ընդարձակ հայ թարգմանությունը, «Արարատ», 1908, էջ 569—570:

23 Ն. Ակիսյան, Տիմոթեոս Կուզի հայ մատենագրության մեջ, Ազգային Մատենադարան, ՊՐ, Վիեննա, 1908, էջ 20—21:

24 Ն. Ակիսյան, Դասական հայերենը և Վիեննական Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 100:

25 Գ. Տեր-Մկրտչյան, Հայ մատենագրության հնագույն թվականները, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 158:

են թե՛ բովանդակությամբ, թե՛ լեզվով հունաբան ղպրոցին հատուկ դավանաբանական երկու թուղթ, մեկը՝ Մովսես Քերդողահոր, մյուսը՝ Հովհան Մանդակունու անունով, երկուսն էլ V դարի հեղինակներ, որոնք օղտվել են «Հակաճառության» թարգմանությունից: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս Գ. Տեր-Մկրտչյանին՝ առավել համոզված կերպով պաշտպանելու իր տեսակետը «Հակաճառության» թարգմանության 480—484 քառամյակին կատարված լինելու մասին:

Հ. Մանանդյանը թեև ճիշտ է գտնում Գ. Տեր-Մկրտչյանի տոմարական հաշիվը, սակայն թարգմանության նշված թվականը նրան թվում է կասկածելի ու աղճատված: Ուստի առաջարկում է Դիոսկորոսի մահվան թվականի ընթերցման մեջ որոշ ուղղում մտցնել և ընդունել Թովթ է=սեպտ. Դ=հոռի ԻԶ զուգավորությունը, որի հանդեպ կունենանք 552—556 թվականները, կամ Թովթ Ե=սեպտ. Բ=հոռի ԲԶ զուգավորությունը, որի հանդեպ կունենանք 560—564 թթ.: Այսպիսով, Հ. Մանանդյանը «Հակաճառության» թարգմանության ժամանակն ընդունում է 552—564 թթ., համաձայն Փոտ պատրիարքի և Անանունի վկայությունների²⁶:

Հետագայում, Գ. Տեր-Մկրտչյանի տեսակետը ջերմ կերպով պաշտպանել են Կ. Տեր-Մկրտչյանը, Ստ. Մայիսյանը և հատկապես Մ. Արեղյանը²⁷, որը հակադրվելով Հ. Մանանդյանին, ուժեղ պատճառաբանություններով հերքում է նրա բոլոր առարկությունները:

Ավելի ուշ, բանասեր Պողոս Անանյանը հայտնաբերել է Դվինի երկրորդ ժողովի մասին պատմական մի նոր հիշատակարան, որի մեջ վկայում է, որ «Հակաճառության» թարգմանությունը կապվում է այս ժողովի հետ: Նա մանրամասնորեն ուսումնասիրում է այն հարցը, թե արդյոք 480—484 քառամյակի պատմական ժամանակաշրջանում հնարավոր էր Տիմոթեոս Կուզի թարգմանությունը: Եվ գտնում է, որ 480—484 թթ., Վահանյանց ապստամբության ժամանակ, Հովհան Մանդակունին, որը նույնպես մասնակցում էր ապստամբության, «չէր կրնար նման գործի թարգմանության հարցով զբաղիլ, կամ հակառակ Քաղկեդոնի իր դիրքը որոշել: Նույն գործը առանձնականի մը թարգմանություն կարելի չէ համարիլ, որովհետև ան դավանական հարցերու համար հայ եկեղեցվո պաշտոնական զինք գործածվեցավ: Ուստի պաշտոնապես պետք էր ճանչցվիլ»²⁸: Պատմական տվյալների և իր հետազոտության հիման վրա Պ. Անանյանը գալիս Խաչնեղրակյանության, որ Դվինի երկրորդ ժողովում «Հակաճառության» թարգմանության սկզբունքն է ընդունվել, իսկ թարգմանությունը պետք է կատարված լինի 560—564 քառամյակի ընթացքում²⁹: Վերջապես, պրոֆ. Ս. Տեր-Մինասյանը, որ «Հակաճառության» հրատարակիչներից մեկն է եղել, հանգամանորեն վերլուծելով Գ. Տեր-Մկրտչյանի տոմարական հաշիվները, հակադրվում է նրան, գտնելով, որ դրանք հիմնված են մի անորոշ, բազմաթիվ պատահականությունների ու սխալների ենթակա և բազմազան բացատրություններ վերցնող թվականի վրա: Նա բերում է Դիոսկորոսի մահվան

²⁶ Հ. Մանանդյան, Հունարան ղպրոցը և նրա զարգացման շրջանները, էջ 101:

²⁷ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 1, 5-րդ հավելված, էջ 613—618:

²⁸ Պ. Անանյան, Պատմական հիշատակարան մը Դվինի Բ ժողովի մասին, «Բազմավեպ», 1958, թ. 6—7, հունիս-հուլիս, էջ 127:

²⁹ Նույն տեղում, էջ 128:

թվականի մասին ասորական բնագրի տվյալը: Ի հսկադրություն Գ. Տեր-Մկրտաչյանի, ցույց է տալիս հետադարձ հաշիվների հնարավորությունը: Եվ սլաւոական ընդհանուր զարգացման ցուցմունքների ու գրավոր աղբյուրների վկայությունների հիման վրա, նա ապացուցում է, որ թարգմանությունը չէր կարող կատարված լինել 480—484 թառամյակում. այն կատարվել է 552—556 թվականներին³⁰:

Ինչքան հաստատուն ու համոզիչ են Գ. Տեր-Մկրտչյանի տոմարական հաշիվներն ու նրանց բազմակողմանի հիմնավորումը, նույնքան համոզիչ են պրոֆ. Ե. Տեր-Մինասյանի և Պ. Անանյանի բազմակողմանի փաստերը՝ պատմական ժամանակաշրջանի, հայ եկեղեցու՝ Քաղկեդոնի ժողովի հանդեպ բռնած դիրքի և դավանաբանական վեճերի մասնակցության հնարավոր ժամանակի մասին: Գուցե հետազայում, նոր վկայությունների հայտնաբերումը անառակելի փաստ հանդիսանա այս հարցի վերջնական լուծման համար և հնարավորություն տա վեճական խոսք ասելու: Առայժմ Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն» թարգմանության թվականը, որի շուրջ գոյություն ունեն վերոհիշյալ լուրջ տարակարծությունները, մեր կարծիքով, չի կարելի վերջնականապես ճշտված համարել, մանավանդ՝ այն հիմք դարձնել հունարան դպրոցի սկզբնավորության որոշման:

Հունարան դպրոցի ժամանակագրության հարցում Հ. Մանանդյանին մեծապես խանգարել է հորենացու, Եղիշեի, Մամբրեի, Դավիթ Անհաղթի ժամանակի մասին իր ունեցած կարծիքը: Այլապես այս հարցը բոլորովին տարբեր լուծում կստանար:

Ինչպես Ն. Ադոնցը և ուրիշներ, Հ. Մանանդյանը ևս այն կարծիքին է, որ կրտսեր թարգմանիչների մասին մատենագրական ավանդական տեղեկությունները առասպելյալ ենթադրություններ են և միանգամայն սխալ: Նոննոսի մեկնությունների հայերեն թարգմանության առիթով նա գրում է. «Թե՛ այս և թե՛ հունարան դպրոցի մյուս երկերը վերագրվել են, սովորաբար, V դարի կրտսեր քաղցմանչազ խմբին: Խորենացու խնդրի հետ միասին ավանդական այս տեսակետը ենթարկվեց, բնականաբար, խիստ քննադատության»³¹ (ընդգծումը մերն է—Ա. Մ.): Այդ է պատճառը, որ Հ. Մանանդյանը հորենացուն և մյուս մատենագիրներին համարել է ոչ թե V, այլ հետագա դարերի հեղինակներ, իսկ հունարան դպրոցի առաջացման համար ժամանակագրական նոր կովան է փնտրել: Այսպես, Փիլոն Երբայեցու թարգմանությունների լեզվի կապակցությամբ նա գրում է. «Հայտնի է նաև, որ այդ թարգմանություններից օգտվել են ոչ միայն Մամբրեն ու Մովսես Խորենացին, այլև Եղիշեն: Ըստ այդմ, Փիլոնի թարգմանության ժամանակը պետք է ենթադրել ոչ ոչ քան VI դարը»³²: Պարզ է, որ եթե Հ. Մանանդյանը հորենացուն, Մամբրեին, Եղիշեին համարեր V դարի հեղինակներ, ապա Փիլոնի երկերի թարգմանությունը, հետևաբար և հունարան դպրոցի սկիզբը VI դար չէր փոխադրի:

Հ. Մանանդյանը անվիճելի է համարում հորենացու ոչ միայն Փիլոնի, այլև Պիտոյից զրքի թարգմանություններից օգտված լինելը. «Սակայն,—գրում

30 Ե. Տեր-Մինասյան, Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն» առ սահմանախնդիր ժողովուն Քաղկեդոնի» երկի թարգմանության ժամանակը, «Թանգարան Մատենադարանի», N 5, Նրեան, 1960, էջ 279—291:

31 Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, էջ 237:

32 Նույն տեղում, էջ 106:

1 նա,—այս հանդամանքը չի պարզում սրանց թարգմանության ժամանակը, որովհետև անորոշ ու վիճելի է նաև հորենացու ժամանակը»³³, Այնուամենայնիվ, այդ երկերի թարգմանության ժամանակը համարում է ոչ ուշ քան VI դարի առաջին կեսը, կողմնորոշվելով «Հակաճառության» թարգմանության իր առաջարկած ժամանակով: Այդ մատենագիրների հետ կապված այլ հարցեր Հ. Մանանդյանի կողմից, համապատասխանաբար, ստացել են տարբեր լուծում: Այսպես, նա միանգամայն հիմնավոր ու համոզիչ է գտնում Ֆր. Կոնիբերի ու Ա. Վարդանյանի լեզվական դիտողությունները Փիլոնի և Իրենիոսի հայերեն թարգմանությունների ժամանակակցության կամ նույն թարգմանչի գործ լինելու մասին³⁴: Սակայն նա համաձայն չէ Կոնիբերի հետ, որ Իրենիոսի երկերը թարգմանված են V դարում: Եվ դարձյալ հորենացու ժամանակը նկատի ունենալով, այս թարգմանությունները ես դնում է VI դարում:

Վերոհիշյալ խմբավորման և ժամանակագրության խոցելի լինելը ավելի բացահայտ կերպով նկատվում է Թեոնի «Յաղագս ճարտասանական կրթութեանց» երկի հրատարակության առիթով Հ. Մանանդյանի գրած առաջաբանում: Ըստ լեզվական առանձնահատկությունների Հ. Մանանդյանն այս երկի թարգմանությունը խմբակից է համարում ոչ թե առաջին, այլ երկրորդ խմբի թարգմանություններին: Նա նկատում է այս երկի քերականական առանձնահատկությունների սերտ առնչությունը Պորփյուրի «Ներածության» թարգմանության հետ: հորենացու Պատմությունից և Թեոնի երկի թարգմանությունից համոզիչ մեջբերումներով ապացուցում է, որ հորենացին իր Պատմության մեջ օգտվել է Թեոնի ոչ թե հունարեն բնագրից, ինչպես այդ ենթադրում էր Ա. Բաումգարտները, այլ հայերեն թարգմանությունից: Նոր ապացույցներով, նա հաստատում է, որ թեև հոեոորական արվեստի հիմնական ձևերակր, որից մեծ չափով օգտվել է հորենացին, «Պիտոյից գիրքն է, անշուշտ, որն ինկեբոդդ դառնում վերստին խմբագրել ու վերամշակել է» (ընդգծումը մերն է—Ա. Մ.), սակայն, «բացի Պիտոյից գրքից հորենացին, ինչպես պարզվում է այժմ, ունեցել է իր ձևերի տակ նաև Թեոնի հայերեն թարգմանությունը, որի ճարտասանական ցուցումները ես առաջնորդող ուղեցույցներ են եղել հոեոորական ուղղությամբ գրված նրա պատմության»³⁵:

Ինչպես նկատելի է, Հ. Մանանդյանն այստեղ հորենացուն համարելով IX դարի հեղինակ, հաստատում է, որ նա իր Պատմության համար օգտվել է հունարեն գալոցի թե՛ առաջին, թե՛ երկրորդ խմբի թարգմանություններից, այսինքն՝ ըստ իր ժամանակագրության, VI դարի առաջին կեսում («Պիտոյից գիրք») և նույն դարի կեսերին (Թեոնի «Յաղագս ճարտասանական կրթութեանց») կատարված թարգմանություններից:

Այժմ հիմնավոր կերպով ապացուցված է հորենացու V դարի հեղինակ լինելը: Իսկ նրա Պատմության գրության ժամանակը համարվում է մոտավորապես 483—485 թթ.³⁶: Հետևաբար, եթե Թեոնի երկի թարգմանությունը, որից

³³ Նույն տեղում, էջ 106—107:

³⁴ Նույն տեղում, էջ 221:

³⁵ Հ. Մանանդյան, Թեոփիլեայ Յաղագս ճարտասանական կրթութեանց, Երևան, 1938, էջ 11:

³⁶ Մովսես հորենացի, Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1961, էջ 19:

օգտվել է հորենացին, իր լեզվական առանձնահատկություններով սերտ առնչություն ունի Պորփյուրի «ներածություն», կամ ընդհանրապես երկրորդ խմբի թարգմանությունների հետ, ինչպես պնդում է Հ. Մանանդյանը, ուրեմն, հունարանի դպրոցի ոչ միայն առաջին, այլև երկրորդ խմբի թարգմանությունները պետք է կատարված լինեն ոչ թե վեցերորդ, այլ հինգերորդ դարի երկրորդ կեսին, 485 թ. առաջ:

Մենք մանրամասն կանգ առանք Հ. Մանանդյանի՝ հունարանի դպրոցի թարգմանությունների խմբավորման և ժամանակի մասին ունեցած տեսակետի վրա այն պատճառով, որ ակադ. Հ. Մանանդյանն իր հեղինակությամբ պաշտպանել է այն: Եթե որոշ բանասերներ, ինչպես ակադ. Մ. Աբեղյանը և պրոֆ. Գ. Ջահուկյանը, իրավացիորեն քննադատել են, ապա ուրիշ լեզվաբաններ և ուսումնասիրողներ անվերապահորեն ընդունել են այդ տեսակետը և հենվել նրա վրա:

Ակներև է, որ հունարանի դպրոցի առաջացման ժամանակի մասին արտահայտված բոլոր տեսակետների առանցքը կազմում է այն հարցը, թե կրտսեր թարգմանիչների և նրանց ժամանակի մասին մատենագրական տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, թե ոչ:

Մենք հակված ենք ընդունելու, որ հունարանի դպրոցի հիմնադիրները եղել են կրտսեր թարգմանիչները, որոնք հելլենիստական մշակույթի կենտրոններում իրենց ուսումնառությունից հետո հայրենիք են վերադարձել այն ժամանակ, երբ արդեն մահացել էին Մեսրոպյան ու Սահակը, ուրեմն՝ 440 թ. հետո: Եթե նկատի ունենանք, որ նրանք արտասահմանում էլ կաբող էին զբաղված լինել թարգմանչական որոշ աշխատանքով, ուրեմն՝ նրանց զբաղմունքները չափազանց ծանրացրել են նրանց զբաղմունքները: Նման եզրակացության հանդիսով համար մեզ հիմք են ծառայել հետևյալ փաստարկները.

1. Զի կարելի առանց լուրջ հիմնավորման, առասպել կամ բոլորովին սխալ համարել կրտսեր թարգմանիչների մասին դարեւ շարունակ կրկնվող մատենագրական ավանդական տեղեկությունները: Բանասերների կողմից այս տեղեկությունները «կասկածի տակ առնելու լավարար հիմքեր չունի»: Համենայն դեպս դժվար է հակառակն ապացուցելու, և սրանցից մեկի ժամանակը խախտելիս պետք է համապատասխան տեղաշարժ կատարել մյուսի ապրելու ժամանակի հարցում³⁷: Մովսեսի և Դավթի կենսագրությունից մեզ հայտնի փաստերը լրիվ համընկնում են պատմական դեպքերին ու ժամանակներին:

2. Վերահիշյալ մատենագիրների հունարանի հեղինակներ լինելու կողմնակի ապացույց կարող են ծառայել այն մակդիրները, որոնցով հայտնի են նրանք հայ մատենագրության պատմության մեջ: Մ. հորենացին կոչվել է «փիլիսոփոս», «քերթողահայր», որը ցույց է տալիս, թե նա զբաղվել է նաև քերթողական արվեստով, զրել է քերականական աշխատություն կամ մեկնություն: Դավթի Անհաղթի հայտնի է որպես «եռամեծն փիլիսոփա», նաև «քերական», Մամբրեն՝ «վերծանող», Աբրահամը՝ «հոևտոր», Պողոսը՝ «մեկնիչ», հոսրովիկը՝ «թարգմանիչ» և այլն:

37 Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատություններ հին և միջնադարյան Հայաստանում, էջ 117:

Կրտսեր թարգմանիչներն են Լեյլա Կյան մատենագիրները, որոնք Լրկաթ ժամանակ ապրել են հիլլենիստական մշակույթի կենտրոններում, հմտացել քերականական, փիլիսոփայական, ճարտասանական արվեստի մեջ և զբաղվել թարգմանությամբ:

3. Եթե հունարան զուրոցի թարգմանությունների լեզվական տարբերությունները, ինչպես Հ. Մանանդյանն է ենթադրում, արդյունք են տարբեր խմբերի կիրառած լեզվական սկզբունքների, ապա այդ շերտերի գոյությունը ժամանակագրական տեսակետից չի ենթադրում անմիջական հաջորդականություն: Ընդհակառակը, V—VII դարերի պատմական ժամանակաշրջանում, որը լի է պարսիկների դեմ հայերի մղած ապստամբություններով, բնականաբար մշակութային զարգացումը տեղի է ունեցել որոշ ընդմիջումներով:

Հետևաբար, եթե Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թարգմանությունը իր լեզվական առանձնահատկություններով վերաբերում է հունարան զուրոցի երկրորդ խմբին, ապա նրա VI դ. կեսերին, կամ V դ. վերջերին թարգմանված լինելը չի կարող հիմք ծառայել հունարան զուրոցի սկզբնավորության որոշման: Այն կարող է նշանակություն ունենալ միայն երկրորդ խմբի թարգմանությունների մոտավոր ժամանակը որոշելու համար: Բակ երկրորդ խումբը կարող է առաջինին հաջորդած լինել ոչ թե անմիջականորեն, այլ որոշ, գուցե երկարատև ընդմիջումից հետո:

4. Այն հեղինակները (Ն. Աղոնց, Հ. Մանանդյան և ուրիշներ), որոնք հունարան զուրոցի սկիզբը տեղափոխում են VI դար կամ ավելի ուշ, մեծ մասամբ, ժամանակագրական ընդունված կարծիքներից շեղվող կարծիք ունեն և ոչ բոլոր դեպքերում են հանդես բերում հետևողականություն: Հ. Մանանդյանը հորենացու, Եղիշեի, Մամբրեի, Դավիթ Անհաղթի լեզվական առանձնահատկությունների մասին խոսելիս, շեշտում է նրանց հունարանությունը, սակայն նրանց ոչ թե կրտսեր թարգմանիչներ, այլ ավելի ուշ շրջանի հեղինակներ է համարում: Հ. Առաքյանը նույնպես տարբերել է կրտսեր թարգմանիչներին հունարան հեղինակներից: Եվ, մինչդեռ դասական շրջանի թարգմանությունները ու բնագիր գործերը մանրամասն թվել և խմբավորել է ըստ դասերի, հետդասական շրջանի «երկրորդ թարգմանիչների» ու նրանց թարգմանությունները մասին ընդհանրապես լռում է: Հարց է ծագում. ըստ այս բանասերների՝ ովքեր են Լեյլա կրտսեր թարգմանիչները, ինչու են կոչվել թարգմանիչ, և ինչ գործեր են թարգմանել:

Լեզվական համեմատությունները ցույց են տալիս, որ վերոհիշյալ մատենագիրներն իրենց բնագիր գործերի մեջ շարադրել են, Լրբեմն բառացի կերպով, նույն միտքը, որը հանդիպում է այս կամ այն հունարան թարգմանության մեջ: Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ հիշյալ մատենագիրները կամ ծանոթ են Լեյլա հունարան թարգմանություններին, կամ օգտվել են դրանցից և կամ իրենք են թարգմանել:

5. Ոչ միայն V—VII դարերի պատմական ժամանակաշրջանում, այլև առհասարակ հայ մատենագրության պատմության մեջ V դարը նշանավորվել է որպես «երկ» ու «կրտսեր» թարգմանիչների ստեղծագործական բեղմնավոր աշխատանքի և քաղաքական Լուսինյան ղոճուկների դարաշրջան: Մտեղծագործական ուժերի այդ աննախընթաց ծաղկումն ու վերելքը, որն արդյունք էր V դարում Հայաստանի արտաքին քաղաքական և ներքին սոցիալական իրադրության, հետապնդել է հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային անկա-

խությունը պահպանելու նպատակը Մինչդեռ VI դարը հայ մատենագրության պատմության մեջ չափազանց անշուք ու աղբատ է։ Այս դարից հիշատակվել են միայն աննշան մի քանի մատենագիրներ։

428 թ. Արշակունիների թագավորության անկումով Հայաստանը կորցրել էր իր քաղաքական անկախությունը և բաժանվել սահմանակից հզոր պետությունների՝ Սասանյան Պարսկաստանի և Արևելյան Հռոմեական կայսրության միջև, որոնք երկուսն էլ վարում էին կրոնական ու մշակութային համաձուլարար քաղաքականություն։ Եւման պայմաններում, երբ հայ ժողովրդի գոյությանն անխուսափելի վտանգ էր սպառնում, թե՛ երեց, թե՛ կրտսեր թարգմանիչների բեղուն գործունեության նպատակը եղել է ամրապնդել հայ ժողովրդի մշակութային ինքնությունությունը, քաղաքական դիմված պայքարին զուգակցել մշակույթի զարգացումը։

V դարի կեսերից հայերի ներքին ինքնությունության դեմ ուղղված՝ Պարսկաստանի քաղաքական ճնշումներն ու կրոնական հալածանքները ավելի քան երեսուն տարի (450—451 թթ. մինչև 481—484 թթ.) խափանեցին Պարսկական Հայաստանի մշակութային զարգացումը։ Շատ հավանական է, որ այդ նույն ժամանակամիջոցում, կրտսեր թարգմանիչներից ոմանք, իրենց զրական-թարգմանչական գործունեությունը ծավալած լինեն Արևմտյան Հայաստանում, որովհետև, նախ՝ այստեղ քաղաքական ավելի նպաստավոր պայմաններ կային, երկրորդ՝ հունական կողմնորոշում ունեցող հայ գործիչները հունական զրականության թարգմանությամբ և նրա տարածումով կարող էին զբաղվել, բնականաբար, հունասեր միջավայրում՝ Հայաստանի արևմտյան մասում, որը գտնվում էր հունական մշակույթի անմիջական ազդեցության տակ։

Մինչդեռ VI դարում բոլորովին փոխվում է Հայաստանի քաղաքական իրադրությունը։ Ակադ. Հ. Մանանդյանը, որը հունարեն դպրոցի առաջացումն ու զարգացումը կապում է VI դարի հետ, գրում է. «Հայերի հունասիրությանը և բյուզանդական կողմնորոշմանը ծանր հարված հասցվեց VI դարի II քառորդում հենց իր՝ Բյուզանդիայի ձեռքով, որը շեշտակի փոխեց իր քաղաքականությունը կայսրությանը կցված հայկական մարզերի նկատմամբ³⁸, վերացնելով նրանց ազատությունն ու ինքնությունները։ Կայսրության համաձուլարար քաղաքականության հետևանքը լինում է այն, որ հայ նախարարներն ավելի սերտ կերպով հարում են Պարսկաստանին։ Դրան ավելանում է նաև այն հանգամանքը, որ Դավիթի երկրորդ ժողովում (554—5 թթ.) վճռական քայլ է արվում հայկական եկեղեցու կապիոր բյուզանդականից անջատելու ուղղությամբ։ Այսպիսով, VI դարում սրվում են հայ-բյուզանդական ոչ միայն քաղաքական, այլև կրոնական հարաբերությունները։ Հայերն ուսման համար հելլենիստական մշակույթի կենտրոններ ուղևորվելու փոխարեն, զարկ են տալիս սեփական մշակութային-կրթական հաստատություններին, հայրենիքում բաց անելով բարձրագույն տիպի դպրոցներ, որոնք կոչվում էին «իմաստության աղբյուրներ»։ այդպիսիք են եղել Շիրակավանի, Արագածոտնի, Արշարունյաց, Սյունյաց, Մայրոց հայտնի դպրոցները։ VI դարի II կեսում, Պարսկաստանի դեմ Արևելյան Հայաստանի ապստամբության ժամանակ (572 թ.) հայերը թեև

38 Հ. Մանանդյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնությունության համար, «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երևան, 1962, էջ 80—81։

կարճատև դաշինք են կնքում Բյուզանդիայի հետ, սակայն, պարսիկների հաղթանակով (577 թ.) վերջ է տրվում այդ դաշինքին:

Ինչպես նկատելի է, VI դարում ընդհանրապես բացակայում են բոլոր այն ազդակները, որոնք կարող էին խթան հանդիսանալ կամ նպաստել հունարան ղարոցի զարգացմանը: Մինչդեռ, V դարի առաջին կեսում ոչ միայն քաղաքական ավելի նպաստավոր պայմաններ են եղել հունարան ղարոցի առաջացման համար, այլև մշակույթի բուռն ծաղկման ու վերելքի շրջանում, առավել քան երբևէ կարող էր զգացվել քիթականական և ճարտասանական դասադրերի խիստ անհրաժեշտությունը. իսկ այդ երկերը կարող էին թարգմանել հունարենին և քերթողական արվեստին լավ տիրապետած կրտսեր թարգմանիչները:

Վերահիշյալ բոլոր հանգամանքները նկատի ունենալով, առավել հավանական ենք դտնում հունարան ղարոցի սկիզբը դնել V դարի կեսից առաջ՝ II քառորդի վերջերին:

К ВОПРОСУ О ХРОНОЛОГИИ ГРЕКОФИЛЬСКОЙ ШКОЛЫ

А. Н. МУРАДЯН

(Р е з ю м е)

Хронология грекофильской школы является одним из спорных вопросов армянской филологии. Уточнение этого вопроса имеет важное значение не только для истории армянского языка, но и для истории армянской культуры. Ввиду отсутствия точных письменных данных в литературе, высказывались различные мнения относительно времени возникновения грекофильской школы, относя ее к началу первой половины V в. и вплоть до VIII в. Хронологией грекофильской школы наиболее подробно занимался академик Я. А. Манандян, который группировал переводы грекофильских авторов и приблизительно определил их время. По мнению Манандяна, это течение возникло в конце V в. или в начале VI в.

Основоположниками грекофильской школы были младшие переводчики, литературно-переводческая деятельность которых началась примерно в конце 2-й четверти V в. Пятый век, особенно первая его половина, в истории армянской филологии ознаменовалась как эра непревзойденного для тех времен творческого роста и интенсивной переводческой деятельности. В этот период в Армении существовали благоприятные политические и культурные условия для возникновения грекофильской школы, тогда как в VI в., в связи с обострением армяно-византийских политических и религиозных отношений, уже отсутствовали все те стимулы, которые могли способствовать возникновению этой школы.